

Կ Ա Ր Գ

ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ՏԵԽՆԻԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ
ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ
ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է տիեզերական օբյեկտները և (կամ) տեխնիկան շահագործողի (այսուհետ՝ շահագործող) կողմից այլ շահագործողի օտարման նպատակով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու հետ կապված հարաբերությունները:

2. Շահագործողը տիեզերական տեխնիկան և (կամ) օբյեկտները օտարում է միայն լիազոր մարմնի համաձայնությունը ստանալու դեպքում:

3. Շահագործողը տիեզերական օբյեկտները և (կամ) տեխնիկան օտարելուց առաջ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) համաձայնությունը ստանալու նպատակով ներկայացնում է դիմում, որը պետք է պարունակի՝

1) շահագործողի տվյալները՝ անվանումը, գտնվելու վայրը, տնօրենի տվյալները (անունը, ազգանունը, հասցեն).

2) տիեզերական գործունեության լիցենզիայի սերիան և համարը.

3) տիեզերական օբյեկտների և (կամ) տեխնիկայի համապատասխան բնութագրող նշանը կամ դրա գրանցման համարը.

4) օտարման նպատակը.

5) նոր շահագործողի տվյալները՝ անվանումը, գտնվելու վայրը, տնօրենի տվյալները (անունը, ազգանունը, հասցեն).

6) նոր շահագործողի տիեզերական գործունեության լիցենզիայի սերիան և համարը.

7) դիմումում ներառված տեղեկությունները հավաստող փաստաթղթերի պատճենները:

4. Լիազոր մարմինը շահագործողի դիմումը ստանալուց 15 օրվա ընթացքում տալիս է համաձայնություն տիեզերական օբյեկտները և (կամ) տեխնիկան օտարելու համար:

5. Շահագործողի դիմումը ստանալուց հետո լիազոր մարմինը տիեզերական օբյեկտները և (կամ) տեխնիկան օտարելու վերաբերյալ հարցում է ուղարկում Հայաստանի

Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն՝ 5- օրյա ժամկետում դիրքորոշում ստանալու համար:

6. Լիազոր մարմինը սույն կարգի 4-րդ կետով նախատեսված ժամկետում համաձայնություն չի տալիս տիեզերական օբյեկտները և (կամ) տեխնիկան օտարելու համար, եթե՝

1) ներկայացվել են թերի կամ ակնհայտ կեղծ տեղեկություններ.

2) նոր շահագործողն իրավունք չունի զբաղվելու տիեզերական գործունեությամբ.

3) սույն կարգի 4-րդ կետում նշված մարմիններից (մարմնից), անվտանգության նկատառումներից ելնելով, ներկայացվել է բացասական դիրքորոշում:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված՝ լիազոր մարմնի կողմից համաձայնություն չտալու հիմքերը վերանալու դեպքում շահագործողը կարող է սույն կարգին համապատասխան նորից դիմել տիեզերական օբյեկտները և (կամ) տեխնիկան օտարելու համար՝ լիազոր մարմնի համաձայնությունը ստանալու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ